

ԵԵՔՄՊԻՐԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ՇԵՔՍՊԻՐ. «ՄԵԾ ԱՂՄՈՒԿ ՈՉՆՉԻՑ»։ ԲԵՆԵԴԻԿՏ

Բեմում իր առաջին քայլերն անող ո՞ր երիտասարդ գերասանը չի երազում հանդիպել Շեքսպիրի հետ։ Իմ շեքսպիրյան առաջնեկը՝ Կլավդիոսը «Համլետում»՝ ուրախ հանդիպում եղավ։ Երկրորդ հանդիպումս տեղի ունեցավ մեր թատրոնի համար ոչ սովորական պայմաններում։ «Մեծ աղմուկ ոշնչից» ներկայացման մեջ ես զբաղված չէի, բեմադրական աշխատանքներն էլ ավարտվելու վրա էին, երբ գեղխորհրդի դիմանը պարզվեց, որ անհրաժեշտ է փոխել թենեդիկտի գերակատարին։ Առաջադրվել էր իմ թեկնածությունը։ Դերի պատրաստմանն էլ տասը օր էր տրվել։ Պրեմիերան արդեն հայտարարված էր։

Ես հրաժարվում էի, պատճառաբանելով, որ տեքստը շգիտեմ և որ ներկայացման գլխավոր գերը յուրացնելու համար տասը օրը շատ բիշ է։ Ընդ որում, ես կարդացել էի Լենսկու մասին հենց նոր լուս տեսած գրքույկը, ուր պատմվում էր, թե ինչպես է խաղացել նույն գերը Փոքր թատրոնի այդ հոյակապ գերասանն ու ոեթիսյորը։

Բայց հրաժարականս լընդունեցին։ Կոլեկտիվի հանդեպ ունեցածս հարգանքը, կարգապահության և, մանավանդ, ստուդիականության (անձնական շահը թատրոնի շահերին զոհաբերելու) սկզբունքը պարտադրեցին ինձ ստանձնել այդ գերը։ Ներկայացման բեմադրող ի. Մ. Ռապուպորտի հետ փորձեր անցկացնելուց բացի, ես խնդրեցի, որ ազատ ժամերին ինձ հետ պարապի նաև Բորիս Վասիլեկի Շշուկինը։ Վերջինս իր կյանքում ոչ մի ներկայացում չէր բեմադրել, բայց հիանալի ոեթիսյոր — մանկավարժ էր։ Նրա հետ բոլոր ազատ ժամերիս լրացուցիչ պարապմունքներ ունեցանք։ Հետաքրքրականն այն էր, որ այդ ընթացքում իմ կողքին խաղընկերներ չկային։ Շլուկինի հետ միասին պարզեցինք թենե-

զիկափ անցուղարձն ու անելիքները եվ տառը օրը տքնության մեջ գրեթե աննկատ անցավի Բնդշանուր փորձերին ևս ձգատմ էի լոկ անքար ճիշտ ասել, խաղի մտախն խոսք լինել չեր կարսով եվ, անկեղծ ասած, զիսավոր փորձերից առաջ ևս ինձ այսրան էլ լավ չեի զգում Զկար ո՛չ կերպար, ո՛չ բնավորություն ևս հազնում էի Բենեղիկափ շորերը և զգում, որ իմ կառուցվածքն ու հասակը չեն համապատասխանում նրա մասին իմ խոկ ունեցած պատկերացմանը նա պետք է ավելի թիկնեղ լիներ, ավելի բարձրահասակի ենդրեցի, որ կոչեկներիս կրտնկները բարձրացնեն, ուսերիս ու կրծքիս էլ բամբակ գնեն: Թարուն գրիմ էի անում, կեղծամներ փորձում, գեմքու ու ձեռքերս հատուի գունաներիկերով սևացնում (չէ՞ որ Գոն Փեղոր արքայազնը ու նրա շքախմբի մեջ մանող մյուս անձինք էլ նոր էին վերադարձել արշավանդից):

Զգալով, որ մոտենում եմ Բենեղիկափ արտաքինին ու «մարմնաշափերին» սկսեցի փնտրել նրան հարմարող խմատ ու կոսիիտ խոսելակերպը: Լայն կրծքավանդակի տեր լինելու ինքնաներշնչումից ձայնս ավելի հնչուն դարձավ: Բայց ինչպես որսալ Բենեղիկափ ներքին նկարագրեց Զէ՞ որ իմ փնտրածն առայժմ վերաբերում էր Հերոսի արտաքին տեսքին: Պետք էր շոշափել Բենեղիկափ յուրահակությունը: Ես խնդրեցի իսոսիֆ Մատվեևիշ Ռապուպորտին, որն անվերեն լավ գիտեր, կարդալ ինձ համար ողջ զերը բնագրով: Ենքաղիրի կայծեկոտոն և, միաժամանակ, երաժշտական լեզուն ամրացրեց իմ պատկերացումը Բենեղիկափ մասին և Հիմնավորեց թավ ու շշշառն այն խոսելակերպը, որ բնտրել էի ես նրա համար: Սկսեցի կարգալ ոսւս պոետների այն բանաստեղծությունները, որ պայմանավորում են Եռանգուն ու միաժամանակ երաժշտական արտասանություն: Զգտում էի ամեն կերպ ընդայնել ձայնիս հնչունաշարը: Բայց և այնպես, բոլոր այդ վարժությունները նախապատրաստում էին ինձ դերի համար, սակայն զերը չեին ուրվագծում:

Վրա հասավ նախահանդիսատեսային վերջին փորձը: Ես զգում էի, որ խաղընկերներս ջանում էին օգնել, ներքաշել ինձ բնմական ակտիվ շիման ու անցուղարձի մեջ: Իսկ ես տակավին տեքստով էի մտահոգված, Հիշողությանս մեջ այն շամփոփլեց: Փորձից Հետո Ռապուպորտը կազմին դիտողություններ անելիս ինձ բաշալերեց: Այսինքն, թե ամեն ինչ լավ է, պիտի որ ստացվի: Բայց ես ես զիտեի, զգում էի, որ Բենեղիկափին առայժմ չխաղացի: Գիտեի, որ ուժիսյորի խոսքերը ոչ այլ ինչ են, բան բարեկամի ցանկություն՝ օգնել ինձ դժվարին կացությանս մեջ:

Ծշուկինն ասաց. «Քեզ մոտ ամեն բան նշված է, դու ամեն ինչ գիտես: Հիմա եկ ու վաղը հանդիսատեսի առաջ, համարձակ խաղաւ»:

Գլխավոր փորձի նախօրյակին, ամբողջ երեկո և թերթում էի Վերածննդի դարաշրջանի իտալական, իսպանական և հոլանդական նկարիշներին նվիրված գրքերը: Դիտում և՛մ Ռուբենսի, Վան-Դեյկի, Ռեմբրանդտի և հատկապես Վելասկեզի նկարները: Դրանք ինձ տողորեցին կենսախցնդությամբ ու ավլումով, իսկ Վելասկեզը նաև իմաստուն պարզությամբ: Նրա դիմանկարների բոլոր հերոսները աշքի էին զարնում իրենց ընդգծված բնավորությամբ, շնչում էին, ապրում կտավների վրա, լավ իմաստով տոնական և հանդիսավոր տեսք ունեին: Այ հենց այսպիսին էլ, մտածում էի ես, — պետք է լինի թենեղիկտը: Ու սկսում էի փնտրել նույն իրավիճակները, նույն կեցվածքներն ու շարժումները, ինչը քիչ առաջ տեսել էի Վելասկեզի մոտ:

Գլխավոր փորձին հանդիսարահը լեփ լեցուն էր: Գրիմը երկար էի անում, որպեսզի առանց հոգեմաշ սպասումի հարդասենյակից անմիջապես բեմ անցնեմ: Դա ինձ միշտ էլ օգնում է գերը ստեղծագործական լիցքով սկսելու: Մուտքից առաջ այնուամենայնիվ հուզվում էի, բայց ահա հնում է Դոն Պեդրոյի և շքախմբի գալստյան հանդիսավոր մեղեղին: Մանում եմ բեմ և գրավում իմ տեղը: Հայտնվում է թեատրիչե — Մանսուրովան և հանկարծ ես ինձ շափականց երջանիկ եմ զգում, որ խաղալու և մ թենեղիկտի գերը:

Այդ գերակատարումը ծնվեց զլխավոր փորձի ժամանակի: Թեատրիչեի հետ իմ հերոսի ունեցած առաջին իսկ ոեպլիկներն ու խոսքակոփլը գրավեցին հանդիսարահի ուշադրությունը: Իմպրովիզացիոն խաղառը անսպասելի պյուտեր էր երեան բերում և, որ ամենազլխավորն է, դրանք մերկում էին թենեղիկտի կերպարին, նրա բնությանը: Թեմից առաջին հեռանալս՝ շատ կարենոր մոմենտ. Թեատրիչեին մի վերջին, իր կարծիքով սպանիլ ոեպլիկ տալով, թենեղիկտը, այսինքն ես, վստահ քայլերով շարժվում եմ գեղի կուլիսները և հանկարծ, ավաշ՝, սայթաքելով, վայր եմ ընկնում: Բարձրանալով, ամոթից կուշ եկած և ցավից կաղալով հեռանում եմ բեմից: Հանդիսատեսը աշխույժ ծիծաղով սկսում է ծափահարել ինձ: Փորձերի ժամանակ այդպիսի բեմավիճակ չէր դրվել: Դա ծնվեց ներկայացման պահին, ինձ համար բոլորովին անսպասելի կերպով:

Դերակատարման բախտորոշ տեսարանը տղամարդկանց ասուլիսի այն պահն էր, երբ Դոն Պեդրոն, Լեոնատոն, Անտոնիոն և Կլավդիոն խոսում են թենեղիկտի հանդեպ թեատրիչեի տածած սիրո մասին, իսկ ինքը

թենեղիկտը, տադավարում թարնված, խում է արդ խոսակցությունը: Դուն Փեղրոն և մյասները, զա՞ իրենց սրամիտ տասլիսից, Հեռանում են Թեմի վրա մնամ եմ միայն ես: Թաքստացից զարս գալով, սկսում եմ զանգաղ շարժվել դեսի բնմառաջրը, ինքս ինձ հարց տալով, ճի՞շտ էր արդյոք այն ամենը, ինչ լսեցի եվ այժմ ի՞նչ աներ Հայտնվում է Թեատրիչեն և Թե-նեղիկարին կանչում ընթրելու Ազշկա յուրաքանչյուր խօսքի մեջ վերջինս տեսնում է իր հանդեպ նրա փայտիած զգացման հաստատումը: «Անար-դի մեկը պիտի լինել սրան շխղճարու համար», — ասում է Թենեղիկար, կրկին մենակ մնալով: Բայց ինչպիս վարվել, մանավանդ երբ ինքն էլ բռնկվում է պատասխան զգացումով: «Չէ՞ որ միշտ ասել եմ, թե ողջ կյանքս ամուրի եմ մնալու», «Մտքովս չէր անցնում, թե հարասնիքս էլ պիտի տեսնեմ»: Թենեղիկար ցանում է զին նետել կնայացի իր համո-զումները: Տեսարանն ավարավում էր հետեւալ ասույթով: «Արժե՞ որ տղամարդը վախինա շար լեզուներից ու գրանց պատճառով խույս տա իր ճանապարհից: Ու Աշխարհը բազմանալ է ուզում» — ծայր համոզվա-ծությամբ շեշտում ու ավարտում էի ես իմ մենախոսությունը: Բայց, դրան վերագիր, փորձերի ժամանակ ես քթիս տակ մոմում էի Տ. Կրեննիկովի ստեղծած հիանալի մի երգի մեղեղին, մտածելով, թե արդյոք կա՞րող է այն օրգանական վերջակետ զնել մենախոսությանս: Եվ ահա ներկայաց-ման ժամանակ, երբ նվազախմբում սկսեց հնչել այդ երգը, ես տարված դրա հմայրով, սկսեցի ձայնակցել երաժշտությանը: Ուշքի գալով, փոր-ձեցի աղատվել «լիրիկական» այդ ինքնաներշնչումից: Սակայն երաժըշ-տությունն ինձ ափելի ու ավելի էր գերում, ինչի հետ միաժամանակ անում ու զորանում էր իմ ոերը դեպի Թեատրիչեն: Եվ ես արդեն բոլո-րովին զլուխս կորցրած, երգեցի այդ երգը՝ ի նշան իմ սիրահարության: Ու մտքով ամուրի կյանքիս հրաժեշտ տալով, ուրախացած, մի թիշ էլ տիրամած հեռացա բեմից:

Հենց այդ պահից էլ զգացի, որ Թենեղիկարի կերպարն ամուր նստած է իմ մեջ: Եվ որ նրան ես լավ եմ ճանաչում, զիտեմ, թե ինչպիս կվարվի յուրաքանչյուր պարագային, ուզածդ հանգամանքներում: Այն ամենը, ինչ նախանշվում էր փորձերի ժամանակ, գլխով ընկալված, բայց գեռևս շատրված, հուզով չկնրված բոլոր գրություններն ու վիճակները բնմա-կան կյանք էին ստանում հենց ներկայացման ընթացքում: Եվ ես մեծա-գույն համույթ էի ապրում բեմի վրա գտնվելուս համար: Այլևս ոչննչ ինձ համար գժվարին կամ անհնարին չէր, յուրաքանչյուր տեսարան ծնվում էր ինքն իրեն, իմպրովիզացիոն եղանակով: Եկեղեցու տեսարանը, ուր

ԲԵՆԵՊԻԿԱՐ սեր է խոստովանում («Ես սիրում եմ ձեզ, Բևառիշե, Հոգիս
է վկա, սիրում եմ, սիրում») ինձ մինչ այդ շատ էր մտահոգում: Թատրո-
նում առհասարակ սիրո խոստովանության տեսարանները միշտ ամենից
բարդն ու դժվարինն են: Բայց ես այնքան հուզված ու անկեղծ էի, որ
ամեն ինչ ասես ինքն իրեն ստացվեց: Նույնը հաջորդ բոլոր տեսարան-
ներում:

Այդպես, տասը օրում ծնվեց իմ ԲԵՆԵՊԻԿԱՐ: Եթե Կոստյա կապի-
տանս (Պոգոդինի «Արիստոկրատներում») հասունանում էր մարդկանց
ուսումնասիրելու, նախատիպերին ծանոթանալու միջոցով, իսկ նրա
կերպարանագծերը մշակվում էին փորձերի ընթացքում, պրեմիերայից
շատ առաջ (նույնիսկ կակաղերով խոսելս), ապա ԲԵՆԵՊԻԿԱՐ լուս աշ-
խարհ եկավ միանգամից, հենց զլխավոր փորձի ժամանակ, երբ դահլիճը
լեփ լեցուն էր հանդիսատեսներով:

Յուրաքանչյուր դերակատարում յուրովի է ստեղծվում: Եվ հենց դրա
մեջ է մեր արվեստի ուժը իմ սիրած թատրոնի, որ կոչվում է խաղարկա-
յին թատրոն: